ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանուն՝ Նարինե Տիտիզյան**

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Մակրոտնտեսական քաղաքականության վարչության իրական հատվածի կանխատեսումների և վերլուծությունների բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա, 2023 թվականի մայիսի 8-ից մինչև մայիսի 19-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ և Վիեննայի միացյալ ինստիտուտ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «**Vulnerability Diagnostics**/ «Խոցելիության ախտորոշում» թեմայով դասընթացին:

6. **Քննարկված թեմաները՝**

1) Խոցելիություն և ճգնաժամեր
2) Հարկաբյուջետային խոցելիություն. պարտքի կայունության գնահատում, ստոխաստիկ պարտքի կայունության վերլուծություն, կարճաժամկետ և երկարաժամկետ ռիսկեր
3) Արտաքին խոցելիություններ, ընթացիկ հաշվի անհավասարակշռության գնահատում, պահուստների համարժեքության գնահատում,
4) Ֆինանսական խոցելիության գնահատում. տաքսոնոմիա և ֆինանսական ռիսկերի չափում, ֆինանսական խաթարումների ախտորոշում, ֆինանսական ցիկլեր, բիզնես ցիկլեր և համակարգային ռիսկեր, երկրորդական ազդեցությունների գնահատում, սթրես թեստերի իրականացում,
5) Պոչերի ռիսկի կանխատեսման մեթոդներ,
6) ԱՄՀ-ի խոցելիության վարժություն:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

✓ Դասընթացի ընթացքում իրականացվել են նաև գործնական աշխատանքներ, որոնց ընթացքում պարզաբանվել են խոցելիության ախտորոշման համար կիրառվող գործիքակազմի առանձնահատկությունները, ինչպես նաև կազմակերպվել և անցկացվել են քննարկումներ և կատարվել ընդհանրացումներ:

✓ Ակտիվ մասնակցություն եմ ունեցել դասընթացի ժամանակ իրականացված գործնական աշխատանքներին, քննարկումներին: Մասնակցել եմ Չեխիայի հանրապետության ընթացիկ իրավիճակի խոցելության գնահատման աշխատանքներին, և շնորհանդեսի տեսքով պատրաստել եմ հարկաբյուջետային ռիսկերի և խոցելիության հատվածները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի շրջանակներում հանդիպումներ չեն եղել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ընդհանուր առմամբ դասընթացը բավականին հետաքրքիր էր՝ հարուստ խոցելիության ախտորոշմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվությամբ: Դասընթացից ստացված գիտելիքներն ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն առնչվում են վարչության կողմից կատարվող աշխատանքներին և կօգտագործվեն հետագա աշխատանքներում, մասնավորապես՝ տնտեսական ցիկլերի գնահատման, բյուջետային գործընթացի շրջանակներում իրականացվող վերլուծություններում և կանխատեսումներում, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ կարծիքների տրամադրման ժամանակ:

10. Գործուղվող՝

Մակրոտնտեսական քաղաքականության
վարչության իրական հատվածի
կանխատեսումների և վերլուծությունների
բաժնի պետ

Նարինե Տիտիզյան

24.05.2023թ.